## Արձանագրություն N 2-3

## ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-26/10 ծածկագրով ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Հ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան

15.05.2026թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Աչոյան

Անդամներ՝ Էդ. Առուստամյան

Գ. Գևորգյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մանուչարյան

Բացակայում էր հանձնաժողովի անդամ Ա. Խաչատրյանը

### 1. Գնման ընթացակարգի մասնակիցների հայտերում արձանագրված անհամապատասխանությունների շտկման գնահատման մասին

--------------------------------------------------------------------------------

(Ա. Աչոյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի մասնակիցներ «Սեյսմշին» ՍՊԸ-ի և Վահրամ Կնյազյան Ա/Ձ-ի հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին 13.05.2026թ. ծանուցվել է վերջիններիս՝ առաջարկելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչն էլ սահմանված ժամկետում արվել է նրանց կողմից:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -3 դեմ-0:*

### 2. Տվյալներ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ

--------------------------------------------------------------------------------

(Ա. Աչոյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերը՝ «Սեյսմշին» ՍՊԸ-ի, Վահրամ Կնյազյան Ա/Ձ-ի հայտերը գնահատվել են բավարար:

2.2 Կարգի 40-րդ կետի 7-րդ ենթակետի, գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկների հիման վրա մասնակիցների հայտերը գնահատվել են հետևյալ կերպ՝

| Մասնակցի զբաղեցրած տեղ | Մասնակցի անվանում | Գնահատման արդյունքում ստացած միավոր |
|---|---|---|
| Ընտրված մասնակից | Վահրամ Կնյազյան Ա/Ձ | 100 |
| 2-րդ տեղ | «Սեյսմշին» ՍՊԸ | 89.4 |

*Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ-0:*

**3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշման վերաբերյալ**

---

(Ա. Աչոյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.2 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել ընտրված մասնակից Վահրամ Կնյազյան Ա/Ձ-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -3 դեմ-0:*

**4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին**

---

(Ա. Աչոյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -3 դեմ-0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ -------------------------------------------- Ա. Աչոյան

Անդամներ՝ -------------------------------------------- Էդ. Առուստամյան

-------------------------------------------- Գ. Գևորգյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ -------------------------------------------- Ա. Մանուչարյան